

...Հարբ եւ Ոգով ի քեզ սքօղի իրակապէս
Եւ քեւ ի մեզ օթագայի ճշմարտապէս...

Այստեղ հարկ է նշել, որ Ալիշանի
ցուցակում կանոնի յիշատակուած չլինե-
լը կասկած չպիտի առաջացնի: Դեռեւս
Մ. Օրմանեանը թէական կարծիք էր
յայտնում, որ հեղինակի ոչ բոլոր շարա-
կաններն են գրանցուած⁵, իսկ աւելի ուշ
Ա. Մաղոյեանը հաստատեց այդ տեսակէ-
տը⁶: Ներկայ պարագայում, փաստօրէն,
գործ ունենք Ալիշանի չգրանցած մէկ այլ
երգաշարի հետ:

Երգերը հիմնականում յանգաւոր են
ու կանոնաւոր անաղաչափութեամբ՝ կա-
ռուցուած նորկտակարանական պատկեր-
ների եւ աստուածաբանական բանաձեւե-
րի միահիւսմամբ:

Բանաստեղծութիւնների նիւթը խիստ
կաղապարային է: Այսինքն՝ բանաստեղծի
խօսքը, եթէ կարելի է ասել, «շրջանա-
կուած» է. այստեղ նա ազատութիւն չու-
նի, եւ նրա ձիրքը կ'երեւայ միայն ար-
տայայտութեան ձեւի մէջ: Անաւարզեցու
յանգաստեղծման սովորութիւնների մա-
սին խօսքը կը կամենայինք եզրափակել
մի գողտրիկ օրինակով.

Ընթրիս բազմի՝ նո աշակերտս
Սահմանելով գիրաշակերտս...

Սա կարելի է համարել հայ շարակա-
նագրութեան մէջ տեղ գտած բաղադրա-
կան յանգաւորման լաւագոյն նմուշներից
մէկը:

Հրաշալի յանգաւորում ունի նաեւ
«Նուազ առ սրբազնութիւն ամենասրբոյ
մարմնոյ եւ արեան Տեառն» գողտրիկ եր-
գը, որի տողատումն իսկ դժուար է յա-
ճախ կրկնուող վերջաւորութիւնների պա-
րագայում: Այդ է պատճառը, որ բերում
ենք առանց տողատման:

Երկու ստեղծագործութիւններում էլ
հեղինակի խօսքը բաւականաչափ սահուն
է, եւ կարող ենք ասել, որ գեղարուես-

տական տեսակէտից այս կանոնը («Նուա-
զը» իր տեսակի մէջ մեզ յայտնի միակ
գործն է) լաւագոյններից մէկն է Գրիգոր
Անաւարզեցու աստուածաշնչեան թեմա-
ներով գրուած շարականների շարքում:

Աւելացնենք նաեւ, որ ցայսօր Անա-
ւարզեցու երգերից հրապարակուած են
հետեւեալները՝

Հրաշափառ ծննդեան Տեառն ճրագալուցին
(«Սիսուան եւ Լեւոն Մեծագործ», էջ
242)⁷.

Կանոն տնօրէնութեան եւ
անուանադրութեան Տեառն կամ
թլիատութեանն Յիսուսի (Ամտ., էջ 4).

Կանոն Գէորգայ Զօրավարին (Ամտ., էջ
46).

Կանոն Թաղեոսի առաքելոյն (Ամտ., էջ
33).

Կանոն Բարսէի հայրապետին (Ամտ., էջ
153).

Կանոն սրբոյն Բէնէդիկտոսի («Գարուն»,
1993, հտ. 3, էջ 90).

Կանոն Լեօնի Մեծի քահանայապետին Հոռ-
մէականի («Բանբեր Երեւանի համալսա-
րանի», 1993, հտ. 2, էջ 96).

Կանոն ամենայն սրբոց (Ամտ., էջ 145).

Կանոն Ամենասուրբ Երրորդութեան կամ Հո-
գեգալստեան ութերորդ ատուր (Ամտ., էջ
108).

Կանոն Ա ատուր ծննդեան, Կանոն Բ ատուր
ծննդեան, Կանոն Բ ատուր ծննդեան (հրա-
պարակել ենք մասամբ՝ «Մանանայ»,
1994, հտ. Ա).

Աւագ շաբաթուայ Բ2, Գ2, Դ2 օրերի Մեծա-
ցուսցէները (Ամտ., էջ 157).

«Հիման յառաքելաւսն» սկսուածքով Ման-
կունքը (Ամտ., էջ 155):

ՆՈՒԱԳ ԱՌ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՍՐԲՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՌՆ

Ջայս քան ուրեմն սրբազնութիւն, յարգե-
ցուք անկեայք յերեսի եւ ի հինքն այն օրի-
նագրութիւն զտեղի տացէ նորոյս ծիսի 199է
հաւատ զպսակութիւն ըզգայութեանցն այսմ
մասի. ծընօղին

եւ ծընիցելոյ քոյ եւ հըրճումն գերայարգոյ
փրկութիւն,

պատիւ, զօրութիւն լիցի եւ օրհնաբանութիւն
ելօղի,

համագոյգ գովութիւն տացի.

ամէն:

ՇԱՐԱԿԱՆԸ Ի ՏՕՆԻ ԱՄԵՆԱՍՐԲՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Գերահրաշ խորհրդոյ
Անգին արեան եւ մարմնոյ,
Ջոր ի փրկել գիողածինս
Արքայն էհեղ կուսածին.
Վերերգեսցուք միաբան
Քաղցրածայնեայք գերգս օրհնութեան:

Հրեշտակ մեծի խորհրդոյ
Մանուկ ծնաւ, մեզ տուաւ.
Եւ յաշխարհի շրջեցեալ,
Ջբանս կեանց սերմանեալ,
Ջկեանս իր յետոյ վերջացոյց
Ջարմանալի կարգաւ գործոց.

Ընթրիս բազմի՝ նո աշակերտս
Սահմանելով գիրաշակերտս
Օրինադիրն ազանց,
Լընու զօրէնս զստուերաց,
Ջինքն բաշխէ կերակուր
Երկոտասան ընտրեալ դասուն:

Բանն, որ եղեւ իսկ ի մարմին
Բանին գիացն ի մարմին
Եւ զգինի յիւր արին
Ծշմարտապէս փոխարկէ
Ջսիրտ հպատակ մեր ի սմին,
Քաջ հաստատէ հաւատ նորին:

Արդ այսքան քան մեծ խորհրդոյս

Յերես անկեայք երկիր պագցուք
Եւ հին ասանդն Մովսիսի
Ջիջեսցէ նորոյս օրինի:
Վերայցցուք հաւատով
Ջոր ոչ ծանիմք զգայարանօք:

Ջանծին ծնօղն եւ զծնեալն
Եկայք փառօք օրհնեսցուք
Եւ զընկեսցեալն ի նոցունց
ՋԱստուած, Հոգին գովեսցուք.
Որպէս միում երրակին
Պատիւ տացուք յաւետագին:

Հցն

Որ գիրաշալի սրբազնութիւն
Տըպագրեցեր առ Մերքիսէղէկ,
Սուրբ քահանայք ըստ կարգի
Նորա գիաց եւ զգինին գոյափոխեալ
Ի քեզ ընծայելով Հօր սուրբ նուէր.
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Որ գերագոյն քան գիսահակ
Մատուցանի անբիծ պատարագ,
Քանգի կամաւ գառն անարատ
Սեղան կազմիս հանապազորի
Առ ի բառնալ զմեղս աշխարհի.
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Որ ընդ ձեռօք թէպէտ ծածկիս
Ի զգայութեանց մերոց, Քրիստոս,
Բայց հաւատով ընդ Սահակայ,
Ջայնդ է, ասեմք, ձայն Յակոբայ,
Եւ ձեռքդ եմ ձեռք Եսաւայ,
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. Ըզֆրիստոս օրհնեցէք,
Բա՛րձր արարէք զնա յափտեան:

Որ ըզդարձութիւն քրոնաջար
Հացին իւր կեանարար մարմնոյ,
Ծաշակմամբն քաղցրացունէ զքոյ
Օրհնեցէ՛ք, բա՛րձր արարէք զնա յափտեան:

Որ զմարմնաւորսն ի հնումն
Հեղհեղաւ մեռոյց նոյն
Կրկնահոս կողին աղբերօք
Ջարդիս կեանագործէ զՔրիստոս
Օրհնեցէ՛ք, բա՛րձր արարէք զնա յափտեան:

Մեծ

Որա՛խ լեր, Մարիա՛մ, կեանք մահացելոց,
Որ գօրհնեալ պտուղդ Յիսուս

